ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022 թվականի կարիքների համար ախտորոշիչ նյութերի ձեռքբերման նպատակով ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

21.02.2022թ. ժ. 14:30

Նիստին մասնակցում էին՝

նախագահող՝ Հարություն Արույան

անդամ՝ Անահիտ Մամիկոնյան,

Քարտուղար՝ Աննա Չոբանյան

Բացակա՝ Անուշ Դավթյան

1. Որպես ընտրված մասնակից պայմանագիրն ստորագրելու իրավունքից զրկելու մասին

Հարություն Արույան

1.1 Գնահատող հանձնաժողովի քարտուղարը անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել է «ՎԱՆ-ՉԱՐՏԵՐ» ՍՊԸ-ին՝ կից ներկայացնելով պայնամանագրի նախագիծը 173-րդ չափաբաժնի մասով, առաջարկելով ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները և ստորագրված պայմանգիրը: Ծանուցումը ստանալուց հետո պայմանագրի ներկայացման վերջնաժամկետը համարվում է 17.02.2022 թվականը ներառյալ: «ՎԱՆ-ՉԱՐՏԵՐ» ՍՊԸ-ն 17.02.2022 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով՝ գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց՝

«ՎԱՆ-ՉԱՐՏԵՐ» ՍՊԸ -ին զրկել պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, այն է՝ *«Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից»:*

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները «ՎԱՆ-ՉԱՐՏԵՐ» ՍՊԸ -ի տվյալները համապատասխան հիմքերով, սահմանված ժամկետում գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

2. 176-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Հարություն Արույան

Հանձնաժողովը որոշեց՝

2"1«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի հիման վրա 176-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

Հանձնաժողովի նախագահող՝ _____ Հարություն Արույան

Անդամներ՝ _____ Անահիտ Մամիկոնյան

Քարտուղար՝ _____ Աննա Չոբանյան